ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/37/2026

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **8 մայիսի 2026թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Եփրեմ Կարապետյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2026 թվականի մայիսի 8-ին քննելով «Միացյալ Քրիստոնյա Հայաստան» կուսակցության ղեկավար մարմնի անդամ Կամո Հովհաննեսի Մարությանի կողմից Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամի՝ 2023 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/37/2026 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթների շրջանակում, «Կուսակցությունների

մասին» սահմանադրական օրենքով (այսուհետ՝ նաև Սահմանադրական օրենք) սահմանված հայտարարագրերը, մասնավորապես՝ Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամների՝ 2023 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագրերը Օրենքով սահմանված ժամկետում ներկայացված լինելու փաստի ստուգման արդյունքում պարզել է, որ «Միացյալ Քրիստոնյա Հայաստան» կուսակցության ղեկավար մարմնի անդամ Կամո Մարությանի Հայտարարագիրը ներկայացված չէ Հանձնաժողով:

1.2 Հանձնաժողովի կողմից 2026 թվականի հունվարի 16-ին և հունվարի 22-ին թիվ 01/131/5-2026 գրությունը «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անհատական ծանուցման ընթացակարգով՝ էլեկտրոնային փոստով, ուղարկվել է Կամո Մարությանին՝ տեղեկացնելով Հայտարարագիրը ներկայացնելու պարտականության վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, լրացնել և ներկայացնել համապատասխան հայտարարագիրը: Կամո Մարությանը ծանուցվել է նաև, որ հայտարարագիրը 30 օրվա ընթացքում չներկայացնելու դեպքում, անհրաժեշտ է ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը՝ ժամը 09:00-ին, ներկայանալ Հանձնաժողով մասնակցելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմելուն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնգօրյա ժամկետում Հանձնաժողովը չի ստացել էլեկտրոնային փոստով ուղարկված ծանուցումը Կամո Մարությանի կողմից կարդալու մասին էլեկտրոնային հավաստում, և հիշյալ ժամկետում չի լրացվել Հայտարարագիրը՝ ծանուցումը 2026 թվականի հունվարի 29-ին փոստային կապի միջոցով՝ պատվիրված նամակով ուղարկվել է Կամո Մարությանին՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված հասցեով:

Նշված ծանուցումը 2026 թվականի հունվարի 30-ին տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (www.azdarar.am) և Կամո Մարությանն օրենքի ուժով 2026 թվականի փետրվարի 9-ին համարվել է պատշաճ ծանուցված: Սակայն, ծանուցված համարվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կամո Մարությանի կողմից համապատասխան հայտարարագիրը չի ներկայացվել Հանձնաժողով:

1.3 2026 թվականի մարտի 13-ին պատշաճ ծանուցված Կամո Մարությանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ 36/26 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.4 Հանձնաժողովի կողմից 2026 թվականի մարտի 18-ին թիվ 01/720-2-2026 գրությամբ Կամո Մարությանին ծանուցում է ուղարկվել՝ վերջինիս ծանուցելով այն մասին, որ վերոնշյալ առերևույթ իրավախախտման հիման վրա 2026 թվականի ապրիլի 9-ին՝ ժամը՝ 15:45-ին, իրականացվելու է գործի քննություն:

1.5 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծանուցումը պատվիրված նամակով ուղարկվել է Կամո Մարությանին և երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողովը չի ստացել ծանուցման հետադարձ առաքանին՝ առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-րդ հոդվածի 14-րդ և 15-րդ մասերով՝ ծանուցումը ապրիլի 3-ին ևս մեկ անգամ փոստով ուղարկվել է Կամո Մարությանին՝ պատվիրված նամակով և էլեկտրոնային փոստի kammar43@gmail.com հասցեին, ինչպես նաև N 01/906-2026 գրությամբ, ուղարկվել է ՀՀ, Երևան, Էրեբունի վարչական շրջանի ղեկավարին, և տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (www.azdarar.am), որից հետո՝ հինգերորդ օրը ծանուցումը համարվել է հանձնված (ստացված), և օրենքի ուժով Կամո Մարությանը համարվել է պատշաճ ծանուցված:

1.6 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՎԻՎ/37/2026 գործով նշանակված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրը՝ 2026 թվականի ապրիլի 9-ին, Հանձնաժողովում առկա չէր Կամո Մարությանի կողմից գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված լինելը հավաստող ապացույց (փոստային ծանուցագիրը ստացած լինելը հավաստող փոստային հետադարձ առաքանին) և հայտնի չէր չներկայանալու պատճառը՝ Հանձնաժողովն առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 3-րդ մասով, կայացրել է ՎԻՎ/37/2026 գործի վարույթը կասեցնելու մասին որոշում:

1.7 2026 թվականի ապրիլի 20-ին Կամո Մարությանի կողմից առձեռն դիմում է մուտքագրվել Հանձնաժողով, որով վերջինս հայտնել է, որ թիվ ՎԻՎ/37/2026 գործով քննությանը ներկայանալու հնարավորություն չի ունեցել պայմանավորված այն հանգամանքով դեռ 2025 թվականի դեկտեմբերի 17-ին մեկնել էր Ամերիկայի Միացյալ Նահանգներ, միևնույն ժամանակ հայտնել է, որ իր հետ Հանձնաժողովը կարող է կապ հաստատել 055-55-54-83 հեռախոսահամարին զանգելու միջոցով:

1.8 Կամո Մարությանին իր հայտնած հեռախոսահամարով զանգի միջոցով տեղեկացվել է, որ թիվ ՎԻՎ/37/2026 գործով քննությունը նշանակվել է 2026 թվականի մայիսի 8-ին՝ ժամը 15:30-ին:

1.9 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Կամո Մարությանի բացակայությամբ 2026 թվականի մայիսի 8-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումները ու պարզաբանումները

Վարույթի ընթացքում Կամո Մարությանի կողմից պարզաբանումներ չեն ներկայացվել:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/37/2026 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Կամո Մարությանը 2021 թվականի օգոստոսի 31-ից առ այսօր հանդիսանում է «Միացյալ Քրիստոնյա Հայաստան» կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ:

3.2 «Միացյալ Քրիստոնյա Հայաստան» կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ Կամո Մարությանը «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է հայտարարատու պաշտոնատար անձ:

3.3 Կամո Մարությանի կողմից Հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

3.4 Գործի քննության օրվա դրությամբ Կամո Մարությանի Հայտարարագիրը ներկայացվել է Հանձնաժողով:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները**, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամները (այսուհետ նաև՝ հայտարարատու պաշտոնատար անձինք) պարտավոր են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել իրենց գույքի և եկամուտների հայտարարագիր (..):

4.2 Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձինք ներկայացնում են պաշտոնը ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև **տարեկան հայտարարագրեր:**

4.3 Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերը ներկայացնելու կարգի նկատմամբ կիրառելի են «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքների համապատասխան նորմերը, (...):

4.4 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

4.5 Օրենսգրքի 169.28 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.7 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.8 Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են պետության անվտանգության ապահովման, կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

4.9 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.10 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.11 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.12 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.13 Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

4.14 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ

օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը:

Տվյալ դեպքում, Կամո Մարությանը մինչև գործի քննության օրը ներկայացրել է Հայտարարագիրը, ինչի արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի դրույթներով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասով, 282-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կամո Հովհաննեսի Մարությանին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն՝ կարճելով ՎԻՎ/37/2026 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կամո Հովհաննեսի Մարությանին այն սահմանված կարգով հանձնելուն (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**